

# ՔԱՄԻՇԼԻԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՒ ՃԵՂԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ (1920-1960ականներ)

Անի Ֆիշենկճեան  
fishenkjianani@hotmail.com

ՄՈՒՏՔ

1918ի աշնան Օսմանեան Թուրքիոյ զինուորական պարտութենէն կարճ ժամանակ ետք, Մուսթաֆա Քեմալի ազգայնական շարժումը յաջողեցաւ կեդրոնական եւ արեւմտեան Փոքր Ասիան, ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանը, Կարսի Մարզը, Սուրմալուն իր գերիշխանութեան տալ առնել<sup>1</sup>: Հայաթափուած Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիոյ վայրերու հայ մնացորդներու փոքրաթիւ հատուածներ, հակառակ թուրքերու ամէնօրեայ սպառնալիքներուն՝ կը շարունակէին չլքել իրենց պապենական հողը: Սակայն Քեմալի էթնիք միատարրութեան քաղաքականութեան որդեգրումով, անոնք ենթարկուեցան ուղղակի եւ անուղղակի հալածանքներու եւ տեղահանութեան: 1923-30ականներ երկարող այս գաղթականութեան հետեւանքով յառաջացած հայ տեղահանեալներուն կարեւոր մէկ մասը հաստատուեցաւ հիւսիսային Սուրիոյ Ճեզիրէի շրջանը, որով հայութիւնը թուային կարեւոր ներկայութիւն մը դարձաւ հոն:

Զաւէն Մսրըլեան կը հաւաստէ, որ այս շրջանին Թուրքիոյ ներքին գաւառներու հայութեան թիւը կը հաշուէր 30-40,000 հոգի: 1923էն սկսեալ անոնցմէ ոմանք կարենալով հոգալ իրենց ճանապարհահաճախսը կը հեռանան Պոլիս կամ Սուրիա<sup>2</sup>: Հալէպի Հայ Կարմիր Խաչի վարչութիւնը 6 Օգոստոս 1924 թուակիր նամակով, Ամերիկահայ Կարմիր Խաչի Կեդրոնական վարչութեան (Նիւ Եորք) կը գրէ. «*Թուրքիոյ սահմանամերձ ըլլալը իր դիրքով, հոս (Հալէպ Քաղաք - Ա.Ֆ.) ապաստան գտած են բազմահազար գաղթականներ: Գաղթականներու Հալէպ մուտքը, երբեք ընդհատուած չէ ունեցած, մինչեւ այսօր շարունակաբար Թուրքիայէն ինքզինքնին ազատողները, խումբ խումբ կու գան ստուարացնելու անտուն ու անապաւէն մնացած մեր դժբաղդ ազգակիցներու թիւը*<sup>3</sup>:

Մեր աշխատանքը երկրորդ<sup>4</sup> փորձն է ուրուագծային սեղմութեամբ ներկայացնելու Քամիշլիի հայ համայնքի եւ Ճեզիրէի Հայոց Առաջնորդական Փոխանորդութեան պատմութիւնը՝ սկիզբէն մինչեւ 1960ականներու ամառը: Բնականաբար, այս ուսումնասիրութիւնը կարելի չէ ամբողջական համարել:

Թուրքիոյ արեւելեան նահանգներէն հայերու Սուրիա գանգուածային մեծ գաղթին ու Սուրիա հաստատուելուն վերաբերեալ առատ նիւթ կայ հայ մամուլի, հրատարակութիւններու, Սուրիոյ, Լիբանանի եւ Ամերիկայի ու գաղթականներու տեղաւորման հարցերով զբաղող հայ թէ օտար մարմիններու եւ միութիւններու տարեկան տեղեկագիրներուն ու

արխիւներուն մէջ: Նիւթին ուսումնասիրութիւնը ո՛չ միայն պատմամշակութային, այլ նաեւ քաղաքական նշանակութիւն ունի:

#### ՔԱՄԻՇԼԻ

Քամիշլին, կը գտնուի Սուրիոյ հիւսիս-արեւելքը, թրքական սահմանին վրայ: Ան կառուցուած է պատմական Մծքին<sup>5</sup> (յունարէն՝ Նիսիպին) քաղաքի պարիսպներէն 500 մետր դէպի հարաւ: Քաղաքը երկաթուղագիծով հիւսիսէն կը միանայ Իրաքի Մուսուլ քաղաքին, իսկ հարաւէն՝ Սուրիոյ Հասիէէ, Տէր Ջօր, Րաքքա, Հալէպ, Համա, Հոմս եւ Դամասկոս քաղաքներուն:

Քամիշլին իր անունը ստացած է Թուրքիոյ մէջ գտնուող համանուն գիւղէն, որ Խապուր Գետի Ճաղճաղ վտակի ափին կը գտնուէր<sup>6</sup>: Քամիշլի աննշան վայր մը եղած է մինչեւ Ա. Աշխարհամարտ, որմէ ետք ղաշնակիցները նահանջելով թրքական հողերէն, ֆրանսացիք այստեղ՝ Այն Տիարի մէջ, կը հաստատեն իրենց զօրանոցները, կը կազմեն բանակ<sup>7</sup> եւ 1926ին կը հիմնեն նոր քաղաքը<sup>8</sup>, զոր կը բնակեցնեն հայերով ու քրիստոնեայ այլ գաղթականներով:

#### ՔԱՄԻՇԼԻԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՁԵՒԱԽՈՐՈՒՄԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՍԿԶԲՆԱԽՈՐՈՒՄԸ

Քեմալական ազգայնական շարժման յաջողութենէն ետք, Թուրքիոյ նոր վարչակազմը հետամուտ եղաւ ինչպէս հայաբնակ այլ շրջաններու, նոյնպէս Պշերիկի<sup>9</sup> շրջանի հայաթափութեան քաղաքականութեան<sup>10</sup>: Քաղաքականութիւն մը, որ կը միտէր Արեւմտահայաստանը պարպել հայերու մնացորդներէն:

1925ին կը բռնկի քրտական ապստամբութիւնը, որ կը տարածուի յատկապէս Տիգրանակերտի եւ Բաղէշի նահանգները: Հայոց Յեղասպանութեան մնացորդացը կ'ապրէր քիւրտ մեծաւորներու հովանաւորութեան տակ՝ իրաւագրկուած իր բոլոր իրաւունքներէն: Հետեւաբար չէր կրնար բողոքել թուրք կառավարութեան, կամ գլուխ բարձրացնել քիւրտերուն դէմ:

Կ'ենթադրուի, թէ Արեւմտեան Հայաստանէն գաղթականներու հոսքը կը սկսի 1927ին, ֆրանսացիներու՝ Քամիշլիի գրաւումէն (1926) անմիջապէս ետք: Որոշ տեղեկութիւններ կը հաստատեն սակայն, թէ 1925ին Քամիշլիի մէջ բնակութիւն հաստատած էին արդէն Հասիէէն, Տէր Ջօրէն, Րաքքայէն, Ռաս Ու Այնէն եւ Հալէպէն եկած հայ ընտանիքներ<sup>11</sup>:

Ֆրանսական բանակի ներկայութիւնը կը քաջալերէր Թուրքիոյ մէջ գտնուող սահմանամերձ քրիստոնեաներու գաղթը դէպի Սուրիա: Միւս կողմէն, 1927էն սկսեալ Պշերիկի<sup>12</sup> շրջանի հայութիւնը բռնագաղթի կ'ենթարկուի եւ կը ստիպուի հետիոտն անցնիլ Տարուսեան Լեռները: Ճամփան անոնք չեթէներէն կը կողոպտուին եւ կայք կը հաստատեն

Քամիշլի ու շրջակայքի ճահճոտ վայրերը, Ճաղճաղ Գետի ավերուն, պատմական Մծքին քաղաքի ւերակներուն տակ:

1927էն ետք նոր հոսք կը սկսի դէպի վերոյիջեալ վայրերը: Գաղթականները ընդհանրապէս կու գային Թուրքիոյ քրտաբնակ գաւառներէն, Ճեզիրէթ Պոթանէն կամ Պշերի լեռներէն, եւ տեղանունի հիմամբ կոչուած էին պշերիկցիներ<sup>13</sup>:

1928ի տուեալներով Քամիշլիի մէջ կար 10-15 տուն հայ, որոնք չունէին դպրոց եւ կրօնական հոգաճութիւն<sup>14</sup>: Քամիշլիէն Տիգրան Ռշտունի 8 Դեկտեմբեր 1928 թուակիր գրութեամբ, տխուր կը ներկայացնէ այդ շրջանի մէջ գտնուող գաղթականներու վիճակը եւ անմիջական օգնութիւն կը խնդրէ անոնց համար: Բացի թշուառներու օգնութեան փութալու խնդրանքէն, ան կը տեղեկացնէ արաբներու եւ թուրքերու քովէն հետզհետէ հասնող որբերու եւ որբուհիներու մասին եւ կը խնդրէ շուտափոյթ միջոցներ որոնել պատասպարելու համար զանոնք<sup>15</sup>: Այս գծով Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովը կը յանձնարարէ ատենապետ Ազիրեանին եւ Ֆարէս Սապպաղեանին, որ հանդիպում ունենան ՀԲԸՄ տեղական մասնաճիւղին եւ կամ անոր ատենապետին հետ<sup>16</sup>:

1929ի առաջին ամիսներուն սկիզբ կ'առնէ Թուրքիոյ արեւելեան գաւառներէն դէպի Սուրիա զանգուածային արտագաղթը. գաղթականներուն «մէկ մասը գաղթած են կամովին, մինչեւ Օգոստոսի վերջերը, իսկ մեծագոյն մասը, Սեպտեմբերէն սկսեալ»<sup>17</sup>:

1929ի աշնան, Թուրքիոյ ներքին գաւառներու մէջ ապրող հայերուն կը պարտադրուի լքել իրենց անշարժ ունեցուածքը եւ թրքական անցագիրերով մուտք գործել Սուրիա: «Այդ անցագիրերուն վրայ կը զարնուէր կնիք մը, որ կ'ըսէր 'Թուրքիա վերադարձը արգիւրած'»<sup>18</sup>: Գաղթականները կու գային Տիարպեքիրէն, Խարբերդէն, Բալուէն, Մարտինէն, Վանէն, Պշերիկէն եւ այլ շրջաններէ: Խարբերդէն եւ Բալուէն գաղթողները երկաթուղիով կը հասնէին Սուրիոյ սահմանագլուխը, իսկ «Տիարպեքիրի շրջանի հայերը հարկադրուած էին քալելով հասնիլ սահմանագլուխ»<sup>19</sup>: Սակայն 1929ի վերջին ամիսներուն թուրք-սուրիական սահման հասած (Ախթերինի կայարան) 200 նոր գաղթականները չունենալով անցագիր՝ անոնց ցոյց կը տրուի դէպի Թուրքիա վերադարձի ճամփան<sup>20</sup>:

Բերիոյ Թեմը նկատի ունենալով այս երեւոյթին յուժ կարեւորութիւնը 28 Հոկտեմբեր 1929ին պաշտօնական գիրով կը պարզէ իրավիճակը Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. հայրապետին եւ անյապաղ լուծում կը խնդրէ: «Քէմալական Թուրքիոյ որդեգրած հայահալած քաղաքականութեան հետեանքով, Թուրքիոյ ներքին գաւառներէն գրեթէ ամէն օր, Հալէպ կը հասնին գաղթականաց կարաւաններ, որոնք հազարամէկ դժուարութիւններով հազիւ թէ ապաստանած Սուրիոյ ասպնջական սահմանները, կ'ենթարկուին կարգ մը դժուարութիւններու, անոր համար

որ անոնցմէ շատերը կանոնաւոր անցագիր չունենալով, համապարասխան վիզա չեն ստացած Արանայի ֆրանսական հիւպատոսարանէն: Միջհայրենակցական Միութեան Վարչութեան գլխաւոր խնդրանքին վրայ, Հոկտեմբեր 24 թուակիր եւ 9940 համարով դիմած ենք Հալէպի Ֆրանսական Տեղեկաբու Դիւանի պետ Քոմանսրան Գուվէռին, որ եթէ կարելի է, առանց դժուարութեան Սիրիա մտնել արտօնուին քէմալական Թուրքիայէն ազատուող հայ խլեակները»<sup>21</sup>:

Քաղաքական ժողովը իր Հոկտեմբեր 1929ի նիստին նկատի կ'ունենայ նաեւ Տիգրանակերտի Նահանգի Պշերիկ-Ռըշգոթանի շրջանէն արտաքսուած եւ Քամիշլի ու Հասիչէ համախմբուած քրտախօս եկուոր շուրջ 150 ընտանիք հայերու կողմէ իբրեւ ներկայացուցիչ եկող երկու ազգայիններու գրաւոր եւ բերանացի դիմումները, «որոնք շատ տխուր կերպով կը պատկերացնեն լեռնակեցիկ այդ մաքուր ժողովուրդի վիճակը, եւ կը խնդրեն որ անմիջական օգնութիւններ ըլլան, այլապէս անտուն եւ անպարսպար այդ ժողովուրդը յառաջիկայ խստաշունչ եղանակին ցրտահար եւ սովահար պիտի փճանայ»<sup>22</sup>:

Փետրուար 1929ի սկիզբները Քամիշլի կը հասնին «72 տնուորներ»<sup>23</sup>: Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովը այս մասին մանրամասն կը տեղեկացնէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 6 Ապրիլ 1929 թուակիր եւ 504 համար տեղեկագիրով եւ միաժամանակ կը խնդրէ «Ս. Օծութեան ազդու միջամտութիւնը ֆրանսական Բարձր-Գոմիսարութեան մօտ, կառավարական միջոցներով Քամիշլիի շրջանին մէջ տեղաւորելու համար զանոնք, որպէսզի հնարաւորութիւն ունենային նուիրուելու հողագործութեան եւ արդիւնաւորելու այդ շրջանի տնտեսութիւնը»<sup>24</sup>: Քաղաքական Ժողովը «քրտախօս հայոց ներկայացուցիչներուն կողմէ մատուցուած խնդրագիրով»<sup>25</sup> անգամ մը եւս կը խնդրէ՝ կրկնել դիմումները Բարձր-Գոմիսարութեան մօտ, «յաջողեցնելու համար իր հայրենիքէն բռնագաղթուած մերազնէից տեղաւորումը Քամիշլիի մէջ, կամ շրջակայքը իրենց առանձին գիւղ մը տրամադրուելով: Մտաւարտութիւնը ունինք որ եթէ անմիջական օժանդակութիւններ չընծայուին այս ժողովրդեան,- ինչպէս որ ըսուած է մեզի,- մի գուցէ անոնք հեռանան մայրենի եկեղեցիէն, ի խնդիր պատահող մը հացի»<sup>26</sup>:

Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովը իր 22 Նոյեմբեր 1929ի նիստին կը քննէ «Թուրքիոյ Արեւելեան նահանգներէն եւ ի մասնաւորի Խարբերդի եւ շրջակայ գաւառներէն Հալէպ, Հասիչէ եւ Քամիշլի հասած վեց հարիւրէ աւելի ազգայնոց ներկայ թշուառ ու անմխիթար վիճակը»<sup>27</sup>, կ'որոշէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն խնդրել Սուրիա հասնողներու եւ գալիք հարիւրաւորներու տեղաւորման, պարենաւորման պարագան ուշադրութեան յանձնել Լիբանանի ու Դամասկոսի Առաջնորդութեանց, ինչպէս նաեւ «արտասահմանի Առաջնորդութեանց եւ բարեսէր ազգայնոց, վերահաս ձեռնէն առաջ օգնութեան փութալու այս կարօտեալներուն»<sup>28</sup>:

Քաղաքական ժողովը նկատի ունենալով խնդիրին հրատապութիւնը նամակներ կը յղէ ՀԲԸՄ Տեղական Մասնաժողովին եւ Հայ Ազգային Կարմիր Էսաչին (ՀԿԷ), խնդրելով որ «ստանձնէ ասոնց խնամատարութիւնը, ապաւինելով ազգային Առաջնորդարանի օժանդակութեան»<sup>29</sup>:

Գաղթականներու տեղաւորման ու սննդաւորման հարցով մտահոգ էր նաեւ Ամերիկայի ՀԿԷ Կեդրոնական Վարչութիւնը: Կազմակերպութիւնը իր ժ. պատգամաւորական ժողովին՝ արծարծուած գերուիներու եւ գերիներու ազատագրութեան օրակարգով կ'որոշէ նաեւ ՀԿԷի Սուրիոյ Շրջանային վարչութեան միջոցով նոր տարեշրջանէն սկսեալ այս գործը աւելի արդիւնաւէտ կազմակերպել. «Նոր գաղթը Սուրիոյ սահմաններէն ներս՝ գրասած է մեր խոր ուշադրութիւնը եւ Պատգ. ժողովէն չնախատեսուած այդ պարագան ստիպած է Կեդրոնս, որ սահմանուած պիտոճէին մէջ կատարէ այնպիսի տնտեսութիւն մը, որով այդ շրջանի միւս կարիքները հոգացուին խնայողաբար, որպէսզի չփութեն այլ շրջանները՝ իրենց համար նախատեսուած պիտոճէին»<sup>30</sup>:

19 Դեկտեմբեր 1929ին «Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսին հովանաւորութեամբ»<sup>31</sup> եւ վաւերացումով, Հալէպի մէջ կը կազմուի Գաղթականաց Խնամատարութեան մարմին մը՝ «Թուրքիայէն բռնագաղթով սահմանն անցնողներու տեղաւորման եւ արտասահմանէն եկող նպաստներու բարուք մատակարարութեան հսկելու համար»<sup>32</sup>: Խնամատարութիւնը կազմուած էր՝ Տրթ.ներ Ալթունեան եւ Յարութիւն Տէր Ղազարեան, Հայր Գաբրիէլ Ծ.Վ. Գասպարեան, Արմէն Մազլումեան եւ Գրիգոր Ազիրեանէ<sup>33</sup>: Խնամատարութիւնը Դեկտեմբերի կիսուն Տրթ. Թորոս Պասմաճեանին կը յանձնարարէ երթալ «Գամըշլու եւ շրջանները, քննել եւ ուսումնասիրել նորեկ գաղթականներու կացութիւնը, տանիլ պէտք եղած աշխատանքը անոնց մէջ ծաւալած տարափոխիկ հիւանդութեանց առաջը առնելու համար եւ տեղեկագրով մը իրենց պարզել անոնց կարիքները»<sup>34</sup>: Գաղթականները թշուառութեան մատնուած էին եւ «երկու-երեք շաբաթէ ի վեր անոնց կը մատակարարէին հաց եւ ապուր: Ծաղկախոր բոյն դրած էր այնտեղ ապաստանող երեխաներուն մէջ եւ հարիւրէ աւելի երեխաներու կեանքը խլած էր»<sup>35</sup>: Այս պատճառով Գաղթականաց Խնամատարութիւնը կ'որոշէ այդ շրջանները ուղարկել Տրթ. Պասմաճեանն ու ՀԲԸՄ պաշտօնատար Մ. Թերճանեանը՝ ժողովուրդը պատուաստելու եւ նպաստ բաշխելու<sup>36</sup>:

Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջաններուն մէջ հայ տարագիրներու օգնութեան փութալու համար, Հալէպի Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբը (ԳԽԿՅ) կը յառաջացնէ ենթայանձնախումբ մը հետեւեալ ազգայիններէ՝ Վեր. Ահարոն Շիրաճեան, Միհրան Բիզանդեան, Տրթ. Էսաչիկ Պողոսեան, Սարգիս Սէլեան, Միհրան Հերարտեան եւ Միհրան Պասմաճեան<sup>37</sup>: Յանձնախումբը

իր Ա. նիստը կը գումարէ Տոքթ. Ալթունեանի բնակարանը, խորհրդակցելու գաղթականներու բարուօք վիճակ մը ապահովելու մտահոգութեամբ: Ենթայանձնախումբը կ'որոշէ գաղթականներու նպաստի գործի ձեռնարկելու համար առաւել մօտէն հետաքրքրուիլ եւ ցանկագրել անոնց՝ անունը, մականունը, տարիքը, ծննդավայրը եւ նիւթական վիճակը<sup>38</sup>:

Յանձնախումբը ուսումնասիրելէ ետք գաղթականներու վիճակը կը տեղեկացնէ, որ 1929-1930՝ մէկ տարուան ընթացքին, Թուրքիայէն Սուրիա հասնող գաղթականներուն թիւը հասած է 800 ընտանիքի, մօտաւորապէս 5000 հոգի, որոնցմէ 600 ընտանիք առժամաբար ապաստանած են «Իրաքի եւ Թուրքիոյ սահմանամերձ Քամըշլը եւ Հասիճէ շրջաններուն մէջ, իսկ 200 ընտանիք ալ կը մնան Հալէպ հիւղաւաններու եւ խաներու մէջ»<sup>39</sup>: Քամիշլի եւ Հասիճէ հասնող գաղթականներուն անյապաղ օժանդակութիւն ցուցաբերելու համար կը կազմուի յանձնախումբ, կը դրկուի բժիշկ, դեղօրայք եւ այլ պիտոյքներ եւ հոգեւոր մխիթարութեան համար քահանայ մը:

Տ. Մկրտիչ Քինյ. Մուրատեան 1929ի սկիզբը վերադարձած ըլլալով «Րասիւլայն, Հասիճէ, Քամիշլի եւ Ամուտայի շրջանը կատարած իր հոգեւոր այցելութենէն» 25 Մարտ 1929ին տեղեկագիր կը ներկայացնէ, որով կը յայտնէ, որ վերոյիշեալ շրջաններուն մէջ ժողովուրդին քուէարկութեամբ առանձին թաղական խորհուրդներ կազմած է եւ կը խնդրէ վաւերացում:

Ֆրանսական իշխանութիւնը եւ տեղական կառավարութիւնը Քամիշլի եւ Հասիճէ ապաստանած գաղթականներու բնակութեան եւ տեղաւորման համար կը տրամադրեն ընդարձակ եւ բարեբեր հողեր՝ թրքական սահմանէն 50 քմ. հեռաւորութեան վրայ: Իսկ Հալէպի Գաղթականաց Ենթայանձնաժողովի կողմէ Քամիշլի կը դրկուի Վեր. Շիրաճեան, նորեկ գաղթականներու կացութիւնը ուսումնասիրելու նպատակաւ: Հալէպի Գաղթականաց Խնամատարութեան կողմէ կազմուած յանձնախումբը ուսումնասիրելէ ետք շրջանի՝ Ճեզիրէի, իրավիճակը կը տեղեկագրէ, որ գաղթած 600 ընտանիքներէն միայն 50ը ինքնաբաւ է, 150ին հող, տուն եւ «200ին թէ՛ հող, թէ՛ տուն եւ թէ՛ լծկան ու սերմնցու եւ լծկան տալէ վերջ, ստիպուած ենք մինչեւ յառաջիկայ գարուն ապրեցնել»<sup>40</sup>: Մնացեալ 200 ընտանիքը բոլորովին չքաւոր է եւ ամէն տեսակի օգնութիւն ցուցաբերելէ ետք, յանձնախումբը հարկ կը համարէ մինչեւ գարուն «ապրեցնել զանոնք»<sup>41</sup>:

Բնակութեան համար կը նշանակուին գիւղեր եւ ամաններ՝ զանոնք տեղաւորելու եւ ինքնաբաւ դարձնելու համար: Կ'որոշեն բնակութեան վայր դարձնել Չքըր Պազարը, Թէլ Պրաքը եւ Ղարասուն: Վերջինս, իր առողջարար օդին, բարեբեր հողերուն եւ երկու գետերու միջեւ գտնուելուն համար՝ կ'ընկալէ 500 ընտանիքներ: Իսկ Հասիճէի մօտերը, Թէլ Պրաքի սահմանին շուրջ, Ճաղճաղ Գետէն ոչ-հեռու, իրարմէ կէս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող երկու բլուրներու վրայ կ'որոշուի կառուցել

Սահակաշէն եւ Մեսրոպաշէն անունով երկու գիւղեր: Այստեղ ապաստան պիտի գտնէին Դեկտեմբեր 1929ին Թուրքիայէն ճեզգիրէի կողմերը գաղթած 600 տուն քրտախօս հայերէն 130 ընտանիք:

Եւ այսպէս, 1927-1930՝ Թուրքիոյ Արեւելեան նահանգներէն դէպի Սուրիա գաղթող հայերը, 31 Մարտ 1930ի տուեալներով, մեծ մասամբ տեղաւորուած էին Սուրիոյ հիւսիս-արեւելեան հետեւեալ շրջաններու մէջ.- «Հասիչէ 100 ընտանիք լուսաւորչական եւ 100 ալ հայ կաթօլիկ. Քամիշլի 400 ընտանիք լուսաւորչական եւ 30 ընտանիք կաթօլիկ հայեր. Գարամանիէ 15 լուսաւորչական եւ հայ կաթօլիկ. Ամուտա՝ 20 կաթօլիկ եւ 40-50 տուն լուսաւորչական»<sup>42</sup>:

Անոնք, առաջին տարիներուն, դժուարին կացութեան կը մատնուին: Մեծ էին Հայ Գաղթականաց Ինքնամատարական Կեդրոնական Յանձնախումբի, ֆրանսական եւ տեղական իշխանութիւններու ցուցաբերած օգնութիւնն ու նպաստը: Սակայն վրանաբնակ գաղթականները՝ դժգոհ իրենց կացութենէն, կը ձգտէին մշտապէս կայք հաստատել առաւել ապահով վայրեր: Այսպիսով շատեր կայք կը հաստատուին Ամուտա, Ռաս Ուլ Այն, Տերպէսիէ, Հասիչէ եւ Տէր Զօր, ուրիշներ կը տեղափոխուին Տերիք ու շրջակայքի Այն Տիար, Ուանըքէ, Պազընտանէ, Հաքամիէ եւ այլ գիւղեր՝ Տիգրիսի մօտակայքը<sup>43</sup>:

Վեր. Շիրաճեան իր 31 Մարտ 1930 թուակիր տեղեկագիրին մէջ հետեւեալը կը գրէ. «Հասիչէէն դէպի Քամիշլի, դէպի Արեւելք գաղթականներ ընդունող բազմաթիւ բնակավայրեր կան: Իրաք-Թրքական սահմանին վրայ կայ ընդարձակ տարածութիւն մը, հոն կան հարիւրաւոր հողէ բլուրներ, որոնք հին ժամանակներուն քաղաքներու եւ գիւղերու կեդրոններ էին, ինչպէս Թէլ Արուսը, Թէլ Ուզումը, Թէլ Ինճիրը, Թէլ Պէյտարը, Թէլ Մաճվըր եւ այլն: Այս վայրերու ներկայ բնակչութիւնը քրիստոնեաներու կողքին բաղկացած է քուրտ մեծամասնութենէ մը, քրտական գիւղեր կ'երեւին ամէն կողմ: Պեպոյի արաքները նոյնպէս կ'ուզեն հաստատուիլ շրջանին մէջ նորանոր գիւղեր շինելով»<sup>44</sup>:

Թուրքիոյ ներքին գաւառներէն հայերու պարտադիր արտագաղթով մտահոգ էին նաեւ բարեսիրական, նպաստահաւաք մարմինները, ՀԲԸՄը, սրտցաւ ազգայիններ, տիկնանց յանձնախումբեր, կուսակցութիւններ, պատրիարքարաններ, առաջնորդարաններ, հայ մամուլը, որոնք գերազանցապէս օժանդակեցին ազգային մարդասիրական գործին<sup>45</sup>:

Հետզհետէ դէպի Սուրիա, ի մասնաւորի Քամիշլի, արտագաղթող հայերու թիւը կը բազմանայ եւ Քամիշլիի շրջակայքը կը հիմնուին 21-22 փոքր հայկական գիւղեր առհասարակ 10-15 ընտանիքներով եւ ծխական դպրոցներով<sup>46</sup>: Յետագային կ'աւելնան գիւղերու թիւն ու ընտանիքները՝ (Ուլթուրթիէ, Հըլըքօ, Տալաուիէ, Տըպանա, Աուեճա, Ապու Ճալալ, Թլսում, Ճուխա, Մլուքսարա, Շամասիէ, Հըմերա, Շէյխաճի, Ճընետիէ (մեծ),

Ճընետիէ (փոքր), Չըրքօ, Սըլամալէք, Մասհատա, Հըլելիէ, Տայօ, Հիմօ, Ճըմաքէ, Ջանտա եւ.)<sup>47</sup>:

Այստեղ ապաստան գտած հայ կարօտեալ ընտանիքները կը բնակէին վրաններու տակ: Իրենց տրուած էին հարկաւոր իրեր՝ հողամշակութեան եւ տուներու շինութեան:

Առաջին տարին երաշտի հետեւանքով ցանքը արդիւնաւէտ չ'ըլլար եւ խնամակալութիւնը երկրորդ անգամ սնունդ եւ սերմնցու կը տրամադրէ նորաբնակներուն: Հաւանական նոր երաշտէ խուսափելու համար, Ճաղճաղ Գետին առջեւ թումբ կանգնեցնելու անյաջող փորձեր կը կատարուին:

1931ին կեցութեան անյաղթահարելի իրավիճակը մտահոգիչ դարձած էր ազգային մարմիններուն համար. անյապաղ պէտք էր քայլեր ձեռնակել: ԳԽԿՅին նախաձեռնութեամբ եւ հոգածութեամբ, շուրջ 500 գաղթական պշերիկցիներ (կամ 180 ընտանիք), Քամիշլիէն կը տեղափոխուին Թէլ Պրաք, ուր իրենց համար իբրեւ ազգային կալուած գնուած էին Թէլ Պրաքի բլուրն ու շրջակայ հարթ տարածութիւնները: Անոնք իրենց ընտանիքներուն համար կը կառուցեն հողաշէն բնակարաններով երկու գաղթակայան, զորս կը կոչեն Մետրոպաշէն եւ Սահակաշէն (Վերի Գիւղ եւ Վարի Գիւղ): Իւրաքանչիւր գիւղ կ'ունենայ իր գիւղապետը: Այնուհետեւ կը բերուին նաեւ անոնց ընտանիքները, իւրաքանչիւր ընտանիքի կը տրուին հերկող ու կաթնտու կենդանիներ, երկրագործական գործիքներ, սննդամթերք ու սերմնցու: Նոյն տարին գիւղացիք կը կատարեն իրենց առաջին ցանքը<sup>48</sup>:

1931ին Սահակաշէնը կ'ունենայ 75 միայրկ բնակարաններ, իսկ Մետրոպաշէնը՝ 64 բնակարան եւ 229 բնակիչ:

Նորաշէն երկու գիւղերու բնակիչները առհասարակ կը զբաղին հողագործութեամբ: Անոնք ունեցած են իրենց համար բաւարար մշակելու հող, որուն արդիւնքով կրցած են իրենց ապրուստը հոգալ:

1931ի ամառը երկու գիւղերու բնակչութեան թիւը կը հասնի 1177ի: Գոյութիւն ունեցած է դպրոց մը՝ երեք բաժանումով, երեք ուսուցիչներու հսկողութեամբ: Երկսեռ աշակերտներու թիւը՝ 138: Համայնքը ունէր քահանայ: Գիւղացիները բարեկամական փոխյարաբերութիւն կը հաստատեն դրացի աշիրէթներու հետ<sup>49</sup>:

Քամիշլիի եւ Թէլ Պրաքի գաղթակայաններու կառուցման եւ գաղթականներու խնամատարութեան գործին մէջ մեծ եղած է Հայ ԳԽԿՅին նիւթական եւ բարոյական ներդրումը: Ան լիազօրուած էր Քամիշլիի եւ Հասիչէի շրջաններուն մէջ գաղթականներու ցանկագրումին եւ տեղաբաշխումին:

1932ին Բերիոյ Թեմի Առաջնորդարանի տուեալներով Քամիշլիի առաքելական եկեղեցւոյ զաւակներուն թիւը կը հաշուէր շուրջ 3000 անձ: «Հագիւ հինգ տարուան կեանք մ'ունեցող Քամիշլի գաւառը՝ ունի 500է աւելի հայ ընտանիքներ զանազան երկրացի, որոնցմէ մեծամասնութիւնը

*Թիրքիայէն վերջերս մազապործ քրտախօս հայեր ըլլալով, կան փիզրանակերպոցիք. մաս մը ուրֆացիք եւ 12 հոգի այնթապցիք»<sup>50</sup>:*

Վերոյիշեալ թուականներուն համայնքը չունէր եկեղեցի եւ դպրոց, ժողովուրդը հոգեւոր սնունդ ստանալու համար կը յաճախէր օտար եկեղեցիներ եւ դպրոցներ. «...այլասերումի վտանգի մ'առջեւ կը գտնուէր: Մանաւանդ որ շրջապատուած էր նենգամէտ որսորդներէ, որոնք ամէն ճիգ ի գործ կը տանէին՝ օգտուելով ժողովուրդի անկազմ վիճակէն: Եւ սա ցաւալի կացութիւնը ոչ մէկուն ուշադրութիւնը կը գրաւէր»<sup>51</sup>:

Պտք է ընդգծել, թէ վերոյիշեալ թուականներուն բնակավայրէն ներս կազմակերպուած ազգային իշխանութիւն գոյութիւն չունէր, մարդիկ իրարու կապուած էին համաքաղաքացիական կապերով:

Բայց ֆրանսական բանակի առկայութիւնն ու ստեղծուած բարենպաստ պայմանները, մղիչ ուժ պիտի հանդիսանային ոչ միայն հայերու, այլեւ սահմանամերձ քրիստոնեաներու՝ բնակութիւն հաստատել վերոյիշեալ վայրերուն մէջ:

Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ 1939-46՝ Քամիշլի եւ Հասիշէ քաղաքներու բնակչութեան, յատկապէս հայերով ստուարացումին շնորհիւ կը սկսի բարեկարգուիլ ու ծաղկիլ յատկապէս Քամիշլին: Այս բարելաման մէջ մեծ ներդրում ունին հայերը, որոնք իրենց տարբեր մասնագիտութիւններով ու արհեստներով այլ հմայք մը տուին արաբական շուկային: 1946ին Քամիշլիի բնակչութեան թիւը հասած էր 10,200ի<sup>52</sup>:

## ՆԵՐԳԱՂԹ

1946ին դէպի հայրենիք զանգուածային ներգաղթի աւետիսը կը հասնի նաեւ Ճեզիրէի հայկական գիւղերն ու մեծ խանդավառութիւն կը ստեղծէ:

Ինչպէս Հալէպի, Դամասկոսի եւ Հոմսի, այնպէս ալ Ճեզիրէի շրջանին մէջ կը կազմուի ներգաղթի յատուկ կոմիտէ, որուն կ'անդամակցին Նորայր Ինճէճեան, Խաչօ աղա Շարոյեան, Մուրատ աղա Շարոյեան եւ ուրիշներ:

Հայ կեանքը, ներգաղթի օրերուն եւս, զուրկ չէր ընթացիկ իրարանցումէ: Ներգաղթի թեկնածուները անմիջապէս լուծարքի կ'ենթարկեն իրենց կալուածները՝ «10 օրէն մեկնելու ակնկալութեամբ»: Գաւառներու մէջ ներքնապէս լարուած կացութիւնը կը շարունակուի մինչեւ ներգաղթի կոմիտէի ծանօթ յայտարարութիւնը, թէ՛ «մթնոլորտային պայմաններու պատճառաւ ներգաղթի աշխատանքը կանգ պիտի առնէ եւ պիտի վերսկսի յառաջիկային»<sup>53</sup>:

Պէտք է նշել, թէ Քամիշլիի շուրջ գտնուող 10է աւելի հայ գիւղեր, հայերու սեփականութիւնը չէին: Անոնք գիւղատէրերու հետ պայմանագրութեամբ, որոշ պայմանաժամերով վարձու առնուած էին: Կնքուած համաձայնութեան մաս կը կազմէր նաեւ գետինի իրաւունքը, զոր գիւղատէրերը կը ստանային ամէն տարի բերքին 10-15% համեմատութեամբ:

Գիւղացիները՝ յուսադրուած մօտալուտ մեկնումի ակնկալութեամբ, անելորդ կը նկատեն տուեալ տարուան վար ու ցանքի մասին մտածել, եւ ստացած հունձքի արդիւնքը ծախելէ ետք՝ կը ծախեն նաեւ ստացուածքները եւ լծկանները մեծ մասամբ:

Նիթական եւ բարոյական կորուստը ենթադրելի է:

1947ին ներգաղթը կը շարունակուի:

1947ին Սուրիայէն կը հայրենադարձուին 1280 ընտանիքներ. 350ը՝ Ճեզիրէէն, 200ը՝ Հալէպէն, 260ը՝ Դամասկոսէն եւ Քեսապէն, մնացեալը՝ Սուրիոյ այլ շրջաններէ:

Բերիոյ Թեմի 1946ի տուեալներու համաձայն, Քամիշլիի հայ բնակչութեան թիւը 7866 էր, իսկ 1947ի տուեալներով՝ 4215 անձ<sup>54</sup>:

Ներգաղթի պատճառաւ կը նուազի ոչ միայն Քամիշլիի հայ բնակչութիւնը, այլեւ որոշ շրջաններու մէջ կը փակուին ծխական դպրոցները եւ տեղացի հայերը առաւել բարենպաստ պայմաններ ունեցող վայրերու փնտռուութիւն կը գաղթեն մօտակայ հայահոծ շրջաններ եւ քաղաքներ:

1950ին Քամիշլին յարաբերաբար կը վերագտնէ իր նախկին աշխուժութիւնն ու խաղաղութիւնը: Հետզհետէ Քամիշլի հաստատուող հայերու թիւը վերելք կ'արձանագրէ: Ըստ 1951ի տարեկան վիճակագրութեան, Քամիշլի կը հաշուէր շուրջ 9317 հայ մարդ (իր շրջակայքով):

16 Յունիս 1965ին Հալէպ կը ժամանեն ներգաղթի լիազօր պատուիրակներ՝ Ա. Նանագիւլեան եւ Գ. Փեհլեւանեան: Պատուիրակները կ'այցելեն Քամիշլի, Բաքքա, Տէր Զօր քաղաքները եւ Սուրիոյ Ճեզիրէի շրջանի 12 գիւղական բնակավայրեր, ուր կ'ապրէին հայեր: Նախապատրաստական աշխատանքներ կատարելէ ետք կը սկսի հայրենադարձներու ընդունումը: 20 Յուլիս 1965ին, հայ պատուիրակներու կողմէ ընդունուած էր տեղափոխել 1364 ընտանիք՝ 7700 հոգի, 10 քաղաքներէ եւ քաղաքատիպ բնակավայրերէ, ինչպէս նաեւ 350 ընտանիք՝ 2500 հոգի՝ երկրի գիւղական շրջաններէ: Սակայն ծրագրուած քանակէն «կարող են հայրենադարձուել» ընդամէնը 220 ընտանիք, 1000 մարդ: Մնացեալը՝ 1144 ընտանիք՝ 6600 մարդ եւ որոշ մեծ ընտանիքներ նույնպէս «պատրաստում են հայրենադարձուելու այս տարի» եւ կամ էլ 1966ի սկիզբը<sup>55</sup>:

1965-1966՝ Քամիշլիի եւ շրջակայ «շուրջ 30 հայաբնակ գիւղերու բնակչութենէն 4000 հայեր ներգաղթեցին Մայր Հայրենիք»<sup>56</sup>:

ԴՊՐՈՏԱՇԻՆՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 1932ին Քամիշլիի արեւելեան կողմը, «Պշերի» կոչուած հայաբնակ թաղին մէջ, վարձու երկու հայաշէն սենեակներու մէջ հիմը կը դրուի հայկական վարժարանի մը: 1933ին, վարժարանը կը փոխադրուի վարձու շէնք մը, ուրկէ տարի մը ետք՝ նորակառոյց եկեղեցւոյ բակը: «Սէրն

ու եռանդը՝ դէպի եկեղեցի եւ քրիստոնեական դաստիարակութիւնը, եւ միշտ նախաձեռնակ ոգին եւ յանդուգն գործունէութիւնը, որը պարծանքով կրնանք ըսել, թէ մի առաւելութիւն եւ առաքինութիւն է՝ ըստ մեր առած կրթութեան՝ որ իրականն է եւ ճշմարիտը»<sup>57</sup>: Այս առաջադրանքէն թելադրուած, բազմապիսի խոչընդոտներով հանդերձ, համայնքի զաւակները հանգանակութեամբ եւ «այլ միջոցներով» կը կանգնեցնեն շէնք մը, որ թէ՛ եկեղեցի, թէ՛ դպրոց, թէ՛ դասարան, թէ՛ հաւաքատեղի ծառայէ հայութեան<sup>58</sup>: Նորաշէն դպրոցը, սակայն, պիտօճէ չունէր եւ միշտ ենթակայ՝ փակուելու վտանգին. «Միայն 400ի չափ երկսեռ աշակերտութիւնը նստեցնելու համար պէտք եղած նստարանները միայն Այնթապցիներս հոգացինք»<sup>59</sup>:

1934ին կը կազմուի 7 անդամներէ բաղկացած նշանակովի թաղական խորհուրդ մը, որ կը վաւերացուի կեդրոնական իշխանութեան կողմէ:

Այս թուականներուն համայնքը օժտուած էր ընդարձակ նորաշէն եկեղեցիով, որուն կից կանգնած էր դպրոցի շէնքը 2 սենեակներէ բաղկացած: «Եկեղեցոյ եւ դպրոցին առջեւ ունին մօտ 400 մէթր քառակուսի տարածութեամբ բակ մը»<sup>60</sup>: Երեսնականներու առաջին կէսին համայնքը ունէր երկու քահանայ՝ Տ. Աշոտ Փափագեան եւ Տ. Գաբրիէլ Երէցեան, մինչ «ժողովուրդի կարեւոր մասը քրտախօս են»<sup>61</sup>:

Առաջին տարեշրջանին դպրոցէն ներս դասարանային դրութիւն գոյութիւն չէ ունեցած, հակառակ աշակերտներուն տարիքի տարբերութեան: 1934-35 կրթաշրջանին վարժարանը կ'ունենայ մինչեւ 4րդ դասարան, իսկ 1945-46ին՝ 6րդ դասարան:

1935ի տուեալներով Քամիշլին կը համարուի հիւսիսային Սուրիոյ ամէնէն հայաշատ կեդրոնը, ուր կը բնակէր 600 տուն հայ<sup>62</sup>:

Խումբ մը գիտակից հայերու նիւթական օժանդակութեամբ եւ ՀԲԸՄ նուիրատուութեամբ՝ հիմը կը դրուի Ազգ. Երկսեռ Վարժարանին՝ գլխաւորութեամբ Տոքթ. Գրիգոր Սարգիսեանի: Վարժարանի առաջին ուսուցիչները եղած են Արշակ Երէցեան եւ Մովսիս Մովսէս Մուրտեան, իսկ տնօրէնները, յաջորդաբար՝ Իսաչիկ Քարուկեան, Արամ Սարգիսեան, Ստեփան Եաղուպեան, Կարապետ Պետրոսեան են.:

1933-34 կրթաշրջանին ՀԲԸՄը կը դադրեցնէ իր նիւթական օժանդակութիւնը ու կը բաւականանայ խորհրդանշական օգնութեամբ: Այդ օրէն սկսեալ վարժարանի պիտօճէին 80 տոկոսը կ'ապահովուի աշակերտութեան վճարած կրթաթոշակով եւ պարբերաբար կազմակերպուած դպրոցական ձեռնարկներով:

1963ին, պետական որոշմամբ՝ կը վերանուանուի Ազգ. Եփրատ Երկսեռ Վարժարան:

Համայնքը տեղական կրթական ուժեր չունենալով՝ տնօրէն եւ ուսուցիչ փնտռած է այլ քաղաքներու մէջ: Ասոնց պաշտօնավարութիւնը յաճախ երկար չէ տեւած: Ասոնք, ընդամենը 1-2 տարի պաշտօնավարելէ ետք

մեկնած են: Գործնականապես 1961-63էն սկսեալ դպրոցը կ'օժտուի տեղացի ուսուցիչներով: 1960ականներուն դպրոցի տնօրէն կը նշանակուի Ասատուր Պօղոսեան<sup>63</sup>:

Վարժարանէն շրջանաւարտ եւ յետագային պաշտօնավարող ուսուցիչ-ուսուցչուհիներէն են՝ Յակոբ Առաքելեան, Պետրոս Գալուստեան, Զուարթ Գալուստեան, Մանուշակ Գգիրեան, Շամիրամ Գէորգեան, Սիրվարդ Գէորգեան, Մատլէն Թեճիրեան, Անահիտ Թէօքմէճեան, Մանուշակ Թովմասեան, Թագուհի Խաչատուրեան, Վալանթին Մանուէլեան, Աստղիկ Մելքոնեան, Գէորգ Սրկ. Մելքոնեան, Անահիտ Մկրտիչեան, Շամիրամ Յարութիւնեան, Ազատուհի Յովհաննէսեան, Լուսվարդ Նասրեան, Թադէոս Պաղիկեան, Մարի Պօղոսեան, Զաւէն Սայեան, Լէւոն Առաքելեան: Վերջին երկուքը եղած են վերոյիշեալ բոլորին ուսուցիչները:

1949ին Ս. Յակոբ եկեղեցին փուլ կու գայ եւ անոր տեղ կը կառուցուին նոր դասարաններ:

**Վիճակագրութիւն Ճեզիրէի Հայոց Թեմի վարժարաններու  
(1 Յունուար-31 Դեկտեմբեր 1942)<sup>64</sup>**

Վայր	Հայ բնկէջն.	Վարժարան	Աշակեր տութիւն
Քամիշլի	4814	Հայ Ազգային Վրժ.	342
Հասիչէ	272	Հայ Ազգային Վրժ.	104
Տէր Զօր	580	Հայ Ազգային Վրժ.	104
Ռաս Ուլ Այն	372	Մեսրոպեան Վրժ.	86
Տերպետիէ	266	Ազգային Վարժարան	47
Ամուտա	233	Մեսրոպեան Վրժ.	47
Թէլ Պրաք	577	Սահակեան Վարժարան	48
Թէլ Քէօշէք	95	Ազգային Վարժարան	32
Քուպր Պիթ	128	Ազգային Վարժարան	24
Տերիք	179	Հայ Մեսրոպեան	31
Այն Տիար	282	չունի	-----
<b>ընդհ.</b>	<b>7798</b>		

**ՃԵԶԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ**

Շրջանի բազմապիսի կարիքներուն կողքին Ս. Աշոտ Քինյ. Փափագեան շուրջ 11 տարի «ձեռնհասութեամբ կը վարէ Քամիշլիի Հայոց Հոգեւոր հովութիւնը»<sup>65</sup>: Բայց անհրաժեշտ էր «վեղարաւոր»ի մը ներկայութիւնը: Ուստի, Ս. Աշոտ պատճառաբանելով իր «յառաջացած տարիքն ու տեսողութեան տկարանալը»<sup>66</sup>, 18 Դեկտեմբեր 1941 թուակիր նամակով՝ Բերիոյ Թեմի Խառն Ժողովէն «ջերմօրէն կը խնդրէր զինք զերծ

*կացուցանել վարչական պարտավորություններ, ուղելով սահմանափակուիլ սուկ հոգետոր պարտականություններու կատարման մէջ»<sup>67</sup>:*

Բերիոյ Թեմի առաջնորդ՝ Արտաւազդ Արք. եւ Ազգային իշխանութիւնը նկատելով որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի «հաճութեամբ» եւ Խանն ժողովին որոշումով, Քամիշլիի շրջանը պիտի ունենայ իր Առաջնորդական Փոխանորդը, յանձին Հոգ. Տ. Խորէն Վարդապետ Բարոյեանի (ապագայ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), 27 Յունուար 1942ի թեմի խանն ժողովի 43րդ նիստին կ'որոշեն «ընթացք տալ Ճեզիրէի շրջանին կողմէ ժամանակէ մը ի վեր յայտնուած փափաքին»<sup>68</sup> եւ ընդունիլ թեկնածութիւնը Կիլիկիոյ միաբաններէն Հոգ. Տ. Խորէն Վրդ. Բարոյեանի, հետեւեալ պայմաններով.-

*«-Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդութիւնը ուղղակի կապուած է Հալէպի Ազգ. Առաջնորդարանին, ներկայացուցչական հանգամանք մը ունենալով Հալէպի Առաջնորդին եւ պատասխանապարտ Անոր՝ իր գործունէութեան մասին:*

*- Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հայր Սուրբին կեդրոնն է Քամիշլի քաղաքը, ուր իրեն պիտի յարկացուին սենեակ եւ այլ դիւրութիւններ:*

*- Ճեզիրէի շրջանի հոգետոր հովուութեան մէջ կը մտնեն Քամիշլի, Հասիչէ, Տէր Զօր, Ռաս-էլ-այն, Տերպետիէ, Ամուրա, Թէլ-Պրաք, Քուպր-Պիթ, Թէլ-Քօչէք եւ Այնտիար»<sup>69</sup>:*

Այսպիսով, 2 Փետրուար 1942ին սկիզբ կ'առնէ Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդութեան պատմութիւնը:

Փոխանորդարանը տակաւ կը կազմաւորուի, կը կանոնաւորուի եւ նախախնամական դեր կ'ունենայ Ճեզիրէի շրջանի հայ ժողովուրդին համար:

Խորէն Վրդ. իր վրայ դրուած յոյսերը «լիովին» կ'արդարացնէ՝ «ժրագան, կորովի, շինարար եւ շրջահայեաց գործունէութեամբ»<sup>70</sup>: Իր նախաձեռնութեամբ Քամիշլիի հայ համայնքը կ'ունենայ փոխանորդարան եւ մանկապարտէզի շէնք, մինչ անձաձկ մնացած Հասիչէի եկեղեցին կը ծածկուի: Իր հովուութեան շրջանին, իրաքանչիւր քաղաք եւ գիւղ կ'ունենայ իր եկեղեցին: Պէտք է նշել, սակայն որ շուրջ 10,000 հայութիւն հաշուող շրջանը չունէր նոյն համեմատութեամբ հոգետրականներ, ինչ որ կը դժուարացնէր ազգային կեանքի կազմակերպումը: Այդ բացը կը լրացնէր Խորէն Վրդ. «*իր յաճախակի այցելութիւններով եւ ժողովուրդին հետ ունեցած իր շփումներով*»<sup>71</sup>:

Եկեղեցւոյ կողքին Ճեզիրէի բոլոր մեծ ու փոքր շրջանները կ'օժտուին ազգային վարժարաններով, ուր ուսում կը ստանան երկսեռ հայ մանուկներ: Այս վարժարաններուն գոյութիւնը փրկութիւն մը կ'ըլլայ շրջանի հայութեան համար, որ մեծ մասամբ քրտախօս էր<sup>72</sup>:

Տ. Խորէնի առաջնորդական գործունէութեան հինգ տարիները (1942-47 Հոկտեմբեր) կ'անցնին քաղաքականապէս խիստ լարուած՝ 1945ի ֆրանքո-սուրիական հակամարտութեան պատճառով: Հակառակ տիրող իրավիճակին, առաջնորդ վարդապետը կը յաջողի պահպանել հայութեան վարկը ե՛ւ քրիստոնեայ, ե՛ւ իսլամ համայնքներու մէջ:

Ան շինարարական արդիւնալի աշխատանքներ կը կատարէ: Կը խրախուսէ 1946-47ի դէպի հայրենիք ներգաղթողները եւ սերտ յարաբերութիւն ու համագործակցութիւն կը մշակէ Բերիոյ Թեմի Առաջնորդ Տ. Զարեհ Վրդ. Փայասլեանի հետ: 1947ին Բարոյեան վարդապետի կը շնորհուի եպիսկոպոսական աստիճան<sup>73</sup>:

1942-47ին, Ճեզիրէի հայոց թիւը կը հաշուէր 35,000 շունչ:

1940ականներու սկիզբը բնութիւնը կը գործէ իր ակերտը. լուր կը տարածուի Հալէպ, թէ Քամիշլիէն անցնող գետը յորդած է եւ պշերիկցիներու թաղը քանդած<sup>74</sup>: Իրականութեան մէջ, սակայն, յորդողը Խապուրը չէր, այլ՝ Թուրքիայէն եկող Ճաղճաղը, որ կը խանգարէ նաեւ երկաթուղագիծը, երկու շաբաթ դադրեցնելով թրքական շոգեկառքը<sup>75</sup>: Ճաղճաղ գետին յորդումով կը վնասուին 450-500 տուններ. ոմանք կը փլին, շատերը՝ փլելու ենթակայ կը դառնան, կը մահանան հինգ անձեր, որոնց երեքը մանուկներ: Հեղեղը կը տանի նաեւ շատերու ծնունդն ապաշարը<sup>76</sup>:

Ըստ այլ տուեալներու հեղեղը հայ զոհեր չի պատճառեր, սակայն վնասներու կ'ենթարկուին 25 տուն հայ-կաթոլիկներ: Հիմնական վնասը կը կրեն սիւրիանիները: Աղէտին առթիւ շրջանի կրօնական պետերը աղէտեալներուն համար հանգանակութիւն կը կազմակերպեն<sup>77</sup>:

2 Փետրուար 1942էն մինչեւ 16 Հոկտեմբեր 1947, Խորէն Վրդ. կը վարէ Հիւսիսային Սուրիոյ Ճեզիրէի առաջնորդական փոխանորդի պաշտօնը՝ յաջողապէս կազմակերպելով թեմին ազգային եւ կրթական գործերը, Սուրիոյ անկախութեան նախորդող բախտորոշ շրջանին:

Ճեզիրէի առաջնորդական փոխանորդը ստանձնելով «Դրան Եպս. պատասխանատու պաշտօն», զինք կը փոխարինէ Տաճատ Ծ. Վրդ. Ուրֆալեանը: Վերջինս, 16 տարիներու պաշտօնավարութեան շրջանին, շինարարական եւ կրթական ծառայութիւններ կը մատուցէ Քամիշլիի, Ռաս Ուլ Այնի եւ Հասիչէի վարժարանները ընդարձակելով, եկեղեցիները եւ Առաջնորդական Փոխանորդութիւնը վերանորոգելով: Քամիշլիի Ազգային Վարժարանը կը վերածուի միջնակարգի, 1400 աշակերտներով: 14 Յունիս 1963ին, Տաճատ Արք. կ'ընտրուի Լիբանանի Թեմի առաջնորդ: Յուլիսի սկիզբը ան կը մեկնի Լիբանան՝ հրաժեշտ տալով Ճեզիրէի հայութեան: Իրմէ ետք, յաջորդաբար Առաջնորդական Փոխանորդի պաշտօններ կը վարեն Կորին Վարդապետ Պապեան (1964-66), Պետրոս Վարդապետ Պէրպրեան (1968-71) եւն.:

1960ականներու կիսուն Կորին Վրդ.ի ջանքերով կեանքի կը կոչուի ներգաղթի յանձնախումբ, ՀՄԸՄին կը վերադարձուի պետութեան կողմէ

գրաւեալ շէնքը, եւ Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան նիւթական յատկացումով կրթական նորակառոյց շէնքերով կ'օժտուին Ռաս Ուլ Այնի, Հասիչէի եւ Տերիքի հայկական համայնքները<sup>78</sup>: Կրթական հաստատութիւններէն ներս կը դասաւանդուին կրօնագիտական եւ հայագիտական առարկաներ<sup>79</sup>:

1968-1971 տարիներուն համայնքը կը հովուէ Պետրոս վրդ. Պէրպէրեանը: Գաղութը կ'ունենայ իր հոգեւոր հովիւները, յանձինս՝ Աշոտ Ա. Քինյ. Փափազեանի, Ղազար Քինյ. Տիքիճեանի, Երուանդ Քինյ. Երէցեանի եւն.:

### ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ կողքին, կաթողիկէ եւ ատետարանական համայնքները եւս կը կառուցեն իրենց եկեղեցին ու դպրոցը:

Քամիշլիի Կաթողիկէ համայնքի կազմակերպումը կը սկսի 1915էն ետք, երբ հայ մայրապետեր կը տարածուին Սուրիոյ զանազան քաղաքներուն մէջ, որոնց կարգին՝ նաեւ Քամիշլի, հիմնելով դպրոցներ եւ որբանոցներ:

Ճեզիրէի եւ Եփրատի շրջանը Հալէպի Հայ Կաթողիկէ Թեմին կապելէ ետք, 1938ին ան կը դառնայ Պատրիարքական Փոխանորդութիւն եւ կը յանձնուի Կիւրեղ Եպս. Զօհրապեանին (մինչեւ 1952)<sup>80</sup>, որմէ ետք՝ 1954ին թեմը կը հռչակուի անկախ:

Քամիշլիի մէջ 1939ին կը հիմնուի մանչերու նախակրթարան մը՝ Ս. Յովսէփ Երկսեռ Վարժարանը, որ կը հաշուէր 100 հայ աշակերտ: Աւելի ուշ՝ 1951ին, կը հիմնուի Անարատ Յղութեան Քոյրերու Նախակրթարանը<sup>81</sup>:

Հայ Աւետարանական եկեղեցին (թըքախօս) իր համայնքը կը միացնէ սուրիանիներուն: Առաջին քարոզիչը կը հանդիսանայ Միհրան Գասարճեան, որուն կը յաջորդեն Պաղտասար Աճէմեանն ու Յարութիւն Յակոբեանը: Աւելի ուշ, համայնքէն շատեր կը միանան Հայ Առաքելական Եկեղեցիին:

Շնորհիւ Վեր. Ն. Խաչատուրեանի, 1953ին Քամիշլիի Աւետարանական Համայնքը կ'օժտուի կեդրոնով: Անդրանիկ ատետարանիչը կ'ըլլայ Վեր. Յովհաննէս Գարճեան (1953-56), որուն կը յաջորդէ Պատ. Պարգեւ Օրջանեան (մինչեւ 1971):

Համայնքը եւ առաջնորդական փոխանորդութիւնը մինչ օրս կը շարունակեն գործել եւ գոյատեւել հակառակ տարաբնոյթ դժուարութիւններուն:

<b>Ցուցակ դպրոցներու 1964-1965<sup>82</sup></b>		
վայր	վարժարան	տնօրէն
Քամիշլի	Ս. Յովսէփ Կաթողիկէ Հայ Մանչերու Վրժ.	Հայր Հ. Շամուն

	Ա. Յովսէփ Անարատ Յրութեան Քոյրերու Վրժ.	Էմիլիա Իշխանեան
	Հայ Ազգային Երկսեռ Վրժ.	Կարապետ Պետրոսեան
Հասիչէ	Հայ Ազգային Վրժ.	Գէորգ Գարաօղլանեան
	Միացեալ Վրժ.	Յովհաննէս Էքմէքճեան
Տէր Զօր	Հայ Ազգային Վրժ.	Շահէ Պոլաճեան
Ռաս Ու Այն	Ազգային Մետրոպեան Վրժ.	Ծերուն Գարապաճաճեան
Տերպէսիէ	ՀԲԸՄ Կիլիկեան Վրժ.	Յովհաննէս Պետիրեան
	Ա. Թերեզա Հայ Կաթողիկոսներու Վրժ.	Նիքոլաս Սապալաղ
Ամուտա	Հայ Ազգային Երկսեռ Վրժ.	Յովհաննէս Մուշեղեան
Թէլ Պրաք	--	--
Թէլ Քէօշէք	--	--
Քուպր Պիթ	--	--
Տերիք	Հայ Ազգային Վրժ.	Սարգիս Աղամեան
Այն Տիար	--	--

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

<sup>1</sup> Զաւէն Մսրրլեան, «Թուրքիոյ Ներքին Գաւառներու Հայոց Պարտադիր Արտագաղթը (1929-1930 թթ.)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Գ. Տարի, 1972, Պէյրութ, էջ 101:

<sup>2</sup> Նոյն, էջ 105:

<sup>3</sup> Հայ Կարմիր Խաչի (ՀԿԽ) Հալէպի վարչութեան աստեանագրութեան տոմար (6 Դեկտեմբեր 1922-5 Յունուար 1925), Հալէպ, էջ 164բ:

<sup>4</sup> Անի Ֆիշենկճեան, «Գամիշլի. Կազմութենէն Մինչեւ 1950-ական Թուականները», *Շաիդ Պարբերաթերթ*, Գ. Տարի, Հալէպ, 2002, էջ 24-29:

<sup>5</sup> Մծբին քաղաքը Մեծն Տիգրանի օրով մաս կազմած է հայկական պետութեան: Եղած է հայոց արքային աթոռանիստ քաղաքներէն, ուր կը պահուէր անոր զանձերուն մէկ մասը: Քաղաքը է. դարուն կը գրաւեն արաբները: Այդ եւ յաջորդող դարերու գրաւումներուն պատճառով քաղաքին ժողովրդագրութիւնը փոփոխութիւն կը կրէ:

Ի. դարու սկիզբը բնակչութիւնը կը հաշուէր 7000 անձ, որուն շուրջ 13%ը հայեր էին: 1915ի Յեղասպանութեան՝ հայերու մէկ մասը կ'ոչնչանայ, մնացեալը կը տարագրուի: Այն հողերը, որոնք այսօր Քամիշլիի կը պատկանին, անցեալին կը պատկանէին Մծբինի ժողովուրդին (Ֆիշենկճեան, «Գամիշլի», էջ 24):

<sup>6</sup> Այլ ստուգաբանութիւն մը «Քամիշլի» բառը յառաջացած կը նկատէ «Քամիշ» (եղէգ) բառէն, եւ զայն կը թարգմանէ իբրեւ «եղէգնուտ» (Ֆիշենկճեան, «Գամիշլի», էջ 24. նաեւ՝ <http://www.wikiwand.com/hy/Ալ-Կամիշլի>):

<sup>7</sup> :353 արտ. محمد جمال، التكون التاريخي الحديث للجزيرة السورية، الطبعة الاولى، بيروت، 2013، ص

<sup>8</sup> Նոյն, էջ 161:

<sup>9</sup> Հայ մամուլի եւ գրականութեան մէջ Պշերիկը (Բշերիկ, Բեշերի, Բըշերիկ, Բիշէր, Բիշիրի, Բուշերիկ, Պըշերի Պշերիկ) կը յիշատակուի իբրեւ զաւառ կամ զաւառակ

---

(Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Հտր. Ա., Երեւան, ԵՊՀ Հրատ., 1986, էջ 713-714):

<sup>10</sup> Մսըրլեան, էջ 102-105 :

<sup>11</sup> Յ. Թովուզեան, *Սիրիայի Եւ Լիբանանի Հայկական Գաղթօջախների Պատմութիւն*, Երեւան, 1986, էջ 170:

<sup>12</sup> Պշերիկը իր քրտախառն գիտերու ցանցով մաս կազմած է Սղերդ Գաւառին, որ ուներ 7 գաւառակներ՝ Բարվար, Էրուն, Խարզան, Հազօ, Շիրվան, Ռետվան եւ Սղերդ (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Հտր. Դ., Երեւան, ԵՊՀ Հրատ., 1998, էջ 631:

Պշերիկը 1890ականներուն Պիթլիս Նահանգի Սասունի շրջանի գաւառակներէն էր, ուներ 57 գիւղ՝ 1597 տուն, բնակիչներուն՝ 852ը հայ ընտանիքներ էին, 745ը՝ քիւրտ: Գարեգին Արուանձտեանցի վիճակագրութեան համաձայն այս 57 գիւղերէն 40ը հայաբնակ էին: Այդ գիւղերուն մէջ է, որ պատմուած է «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպը: 1915ին Պշերիկէն տարագրուած են 2946 հայեր (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի Եւ Յարակից, Հտր. Ա.*, էջ 713-714):

<sup>13</sup> Պատ. Պ. Օրջանեան, «Գամիշլիի Հայ Աւետարանական Համայնքը», *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք*, Բ. Գիրք, Հալէպ, Տպ. Շարք, 1976-1978, էջ 370:

<sup>14</sup> «Տարագիր Հայութեան Տեղաւորումը Սուրիոյ Գաւառային Շրջաններ», *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք*, Ե. Տարի, Հալէպ, 1996, էջ 93:

<sup>15</sup> Ա. Ֆիշենկճեան, *Յուշամատեն Սուրիահայ Օգնութեան Խաչի 1919-2009*, Հալէպ, 2010, էջ 59:

<sup>16</sup> Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Արխիւ (ԲԹԱԱԱ), ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52, 26 Հոկտեմբեր 1928-23 Սեպտեմբեր 1930, ՀԷ. նիստ, 22 Նոյեմբեր 1929:

<sup>17</sup> «Տարագիր Հայութեան Տեղաւորումը Սուրիոյ Գաւառային Շրջաններ», էջ 98:

<sup>18</sup> Մսըրլեան, էջ 105:

<sup>19</sup> Նոյն, էջ 106:

<sup>20</sup> «Տարագիր Հայութեան Տեղաւորումը Սուրիոյ Գաւառային Շրջաններ», էջ 98:

<sup>21</sup> Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւատուն (ՄՏԿԿԱ), Բերիոյ Թեմի (ԲԹ), Հաւաքածոյ /հ/ 3, ցուցակ /ց/1, թղթածրար /թղթ./ 43, էջ 13:

<sup>22</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց 1, թղթ. 43, էջ 13:

<sup>23</sup> Նոյն:

<sup>24</sup> Նոյն:

<sup>25</sup> Նոյն. նաեւ՝ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52:

<sup>26</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 43, էջ 13:

<sup>27</sup> Նոյն, էջ 14. նաեւ՝ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52:

<sup>28</sup> Նոյն. նաեւ՝ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թերթ 106:

<sup>29</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 43, էջ 14: Նաեւ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52, թերթ 106:

<sup>30</sup> Ֆիշենկճեան, *Յուշամատեն*, էջ 55-56:

<sup>31</sup> Տեղեկագիր Հալէպի Գաղթականաց Ինձամատարութեան, 1 Յուլիս 1930, Հալէպ, էջ 2 (ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 82, էջ 16 շրջերես):

<sup>32</sup> Նոյն:

<sup>33</sup> *Եփրատը*, 14 Դեկտեմբեր 1929, Հալեպ, էջ 3:

<sup>34</sup> Սուրիահայ Օգնության Խաչի (ՍՕԽ) 1930-1933ի ատենագրության տոմար, «Տեղեկագիր Տոքթ. Թորոս Պասմաճեանի, Յունուար-Սեպտեմբեր 1930 Սուրիահայ Օգնության Խաչի Կեդրոնական Վարչության, թ. 107»: Հալեպի Հայ Ազգային Կարմիր Խաչի վարչությունը 3 Դեկտեմբեր 1929 թուականի եւ 422 համար գրությանը՝ Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովէն կը խնդրէ «Գաղթականաց Խնամատարութեան կազմակերպումը վստահիլ Հայ Ազգային Կարմիր Խաչի ամբողջական կազմին»: Քաղաքական Ժողովը իր ՀԸ նիստին (3 Դեկտեմբեր 1929) կ'ընտրէ Սարգիս Սէլեանն ու Ն. Մաթոսեանը՝ իբրեւ օժանդակ անդամ Կարմիր Խաչի մօտ Գաղթականաց Խնամատարութեան մէջ աշխատելու (ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52, թերթ 108):

<sup>35</sup> Անի Ֆիշենկճեան, «Հայերու Հոսքը Դէպի Սուրիոյ Հիսիս-Արեւելեան Շրջանները, Թէլ Պրագ (Սկիզբէն Մինչեւ 1938)», *Տարեւ Հայագիտական Տարեգիրք*, Հտր. 1, Հալեպ, 2008, էջ 312:

<sup>36</sup> *Եփրատը*, 28 Դեկտեմբեր 1929, էջ 3:

<sup>37</sup> *Եփրատը*, 11 Յունուար 1930, էջ 3:

<sup>38</sup> «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 4 Հոկտեմբեր 1930, էջ 1274:

<sup>39</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ 3, ց 1, թղծ. 82, էջ 2:

<sup>40</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, նոյն, էջ 3:

<sup>41</sup> Նոյն:

<sup>42</sup> Կ. Մակարեան, «Քրտախօս Բշերիկցիները եւ Անոնց Գաղթը Սուրիա (Պատմա-Ազգագրական Ակնարկ)», անտիպ, Հալեպ, 2003, էջ 17:

<sup>43</sup> Նոյն, էջ 17-18:

<sup>44</sup> Նոյն:

<sup>45</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ 3, ց 1, թղծ. 82, էջ 4:

<sup>46</sup> Վարդան Եպս. Տեմիրճեան կը նշէ, որ գաղթող հայերը հաստատուած են «Գամիշլիի եւ շրջակայ 32 գիւղերուն մէջ» (Վ. Եպս. Տեմիրճեան, *Գաւազանագիրք, Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց*, Հտր. Ա., Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 1980, էջ 474):

<sup>47</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղծ. 101, էջ 5-6: Այս գիւղերու մեծ մասի բնակչութիւնը ներգաղթած է Հայաստան՝ 1946-1948ին եւ 1964-1966ին կազմակերպուած հայրենադարձութեան օրերուն: Այսօր, անոնց մեծ մասը հողագործութեան ընդարձակ տարածութիւններ են:

<sup>48</sup> Անի Ֆիշենկճեան, «Հայերու Հոսքը», էջ 318-321. նաեւ՝ «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 23 Օգոստոս 1930, էջ 1083:

<sup>49</sup> «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 15 Օգոստոս 1931, էջ 1051:

<sup>50</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղծ. 79, էջ 9:

<sup>51</sup> Նոյն:

<sup>52</sup> Պարույր, էջ 367:

<sup>53</sup> Ֆիշենկճեան, «Գամիշլի», էջ 29:

<sup>54</sup> Նոյն:

<sup>55</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 575, թ. 2, 40:

<sup>56</sup> Տեմիրճեան, էջ 491:

<sup>57</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ 3, ց 1, թղծ. 79, էջ 10:

- 
- <sup>58</sup> Նոյն:
- <sup>59</sup> Նոյն:
- <sup>60</sup> ԲԹԱԱԱ, դարան 2. , թիւ 41, թերթ 2:
- <sup>61</sup> ԲԹԱԱԱ, դարան 2. , թիւ 41, թերթ 2: «Գամիշլիի ճիշդ առջեւէն կ'անցնի Ճաղճաղ Գետակը, որուն մէկ եզերքին հաստատուած են բաւական թիով քրդախօս պշերիկցիներ», նոյն:
- <sup>62</sup> ԲԹԱԱԱ, դարան 2. , թիւ 41, թերթ 2:
- <sup>63</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գործ 169, էջ 1-7):
- <sup>64</sup> ԲԹԱԱԱ, դարան Դ. , թիւ 25:
- <sup>65</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 48, էջ 32:
- <sup>66</sup> Նոյն:
- <sup>67</sup> Նոյն:
- <sup>68</sup> Նոյն, էջ 33. նաեւ՝ ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 48, էջ 33:
- <sup>69</sup> Նոյն, էջ 33:
- <sup>70</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 45, էջ 72 (Համարատուութիւն Ազգ. Վարչութեան...):
- <sup>71</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 45, էջ 9, (Երկամեայ Տեղեկագիր...):
- <sup>72</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 45, էջ 9:
- <sup>73</sup> Տեմիրճեան, էջ 479-481:
- <sup>74</sup> ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 85, էջ 12:
- <sup>75</sup> Նոյն:
- <sup>76</sup> Նոյն:
- <sup>77</sup> Նոյն:
- <sup>78</sup> Տեմիրճեան, էջ 491-492:
- <sup>79</sup> Նոյն, էջ 485-486:
- <sup>80</sup> «Հոս հայ կաթողիկէն ալ ունի Առաջնորդական փոխանորդութիւն մը, ուր կը նստի Գերապայծառ Զօհրապեան եպիսկոպոսը» (*Հայաստանի Կոչնակ*, 24 Յուլիս 1948, էջ 703): Փոխանորդութեան մէջ քահանայական պաշտօններ կը վարէին Հալէպէն դրկուած բազմաթիւ վարդապետներ, ինչպէս՝ Տ. Գրիգոր Վրդ. Սարգիսեան (ժողովրդապետ) եւ Տ. Յովսէփ Վրդ. Սապապաղեան. նաեւ՝ <http://www.armeniancatholic.org>.
- <sup>81</sup> Ֆիշենկճեան, «Գամիշլի», էջ 24-29:
- <sup>82</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 22, թ. 2; թ. 4: Ցանկէն առանձնացուցած ենք, ճեզիրէի Թեմի վարժարանները իրենց տնօրէններով: Փոխած ենք ուղղագրութիւնը:

---

**The Armenian Community of Qamishli and the  
Armenian Orthodox Vice-Prelacy of Jazira (1920-1960s)**  
(Summary)

Ani Fishenkjian  
fishenkjianani@hotmail.com

The paper details the origins and development of the Armenian Orthodox vice prelacy in Jezire, and the factors that gave birth to its establishment.

The author describes the arrival of hundreds of Armenian families from the eastern regions of Turkey, who were persecuted and forced to take refuge on the Syrian side of the border. The paper highlights the efforts Armenian local and regional lay and religious authorities made to legalize their settlement on Syrian lands, the allocation of arable lands for them to cultivate and make a living and their eventual integration into the tiny local Armenian communities of north-eastern Syria.

The author argues that their number necessitated the establishment of a vice-prelacy in the region, particularly after the formation of an Armenian school network and other organizations. The vice-prelacy was established in 1942, at a time when the Armenian population of Jezire was around 35,000. However, soon after, in 1946-47 a significant number of these new settlers were repatriated to Soviet Armenia.